ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2025 թվականի N 1765 - Ն

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՆԿԱՐԱԳՐԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՈՒ ՆՇԱՆԻ ՁԵՎԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԺԱՄԿԵՏԸ, ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱԴԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Զբոսաշրջության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) զբոսաշրջային ավտոբուսի որակավորման ընթացակարգը, որակավորման վկայականի ժամկետը, վկայականի տրամադրման կարգը և որակավորման դադարման հիմքերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) զբոսաշրջային ավտոբուսի որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը և չափորոշիչները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) զբոսաշրջային ավտոբուսի որակավորման վկայականի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) զբոսաշրջային ավտոբուսի որակավորման նշանի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սահմանել, որ շահագործման մեջ գտնվող զբոսաշրջային ավտոբուսները պետք է առաջին անգամ որակավորում անցնեն ոչ ուշ, քան սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 12 ամսվա ընթացքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 1-ից, բացառությամբ սույն որոշման 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված դեպքերի:

4. Սկսած 2033 թվականի հունվարի 1-ից՝ զբոսաշրջային ավտոբուսները, որոնց թողարկման տարեթվից անցել է 30 (երեսուն) և ավելի տարի, չեն կարող օգտագործվել զբոսաշրջային ուղևորափոխադրումների իրականացման նպատակով: Ընդ որում, այն զբոսաշրջային ավտոբուսները, որոնք 2030 թվականի հունվարի 1-ի դրությամբ ունեն գործող որակավորման վկայական և որոնց թողարկման տարեթվից անցել է 30 (երեսուն) կամ ավելի տարի, կարող են շահագործվել բացառապես մինչև վկայականի գործողության ժամկետի ավարտը և ենթակա չեն հետագայում վերաորակավորման որպես զբոսաշրջային ուղևորափոխադրող ավտոբուս: Նման զբոսաշրջային ավտոբուսը ենթակա չէ վերաորակավորման, իսկ համապատասխան վկայականի ժամկետը ենթակա չէ երկարաձգման:

5. Սկսած 2035 թվականի հունվարի 1-ից՝ զբոսաշրջային ավտոբուսները, որոնց թողարկման տարեթվից անցել է 20 (քսան) և ավելի տարի, չեն կարող օգտագործվել զբոսաշրջային ուղևորափոխադրումների իրականացման նպատակով: Ընդ որում, այն զբոսաշրջային ավտոբուսները, որոնք 2035 թվականի հունվարի 1-ի դրությամբ ունեն գործող որակավորման վկայական և որոնց թողարկման տարեթվից անցել է 20 (քսան) կամ ավելի տարի, կարող են շահագործվել բացառապես մինչև վկայականի գործողության ժամկետի ավարտը և ենթակա չեն հետագայում վերաորակավորման որպես զբոսաշրջային ուղևորափոխադրող ավտոբուս: Նման զբոսաշրջային ավտոբուսը ենթակա չէ վերաորակավորման, իսկ համապատասխան վկայականի ժամկետը ենթակա չէ երկարաձգման:

6. Սույն որոշման N 2 հավելվածի աղյուսակի 22-րդ կետով նախատեսված՝ զբոսաշրջային ավտոբուսը հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխման համար հարմարեցված լինելու պահանջը սահմանվում է որպես պարտադիր՝ սկսած 2030 թվականի հունվարի 1-ից, և հանդիսանում է զբոսաշրջային ավտոբուսի

որակավորման պարտադիր նախապայման: Այն զբոսաշրջային ավտոբուսները, որոնք 2030 թվականի հունվարի 1-ի դրությամբ ունեն գործող որակավորման վկայական և չեն համապատասխանում սույն որոշման N 2 հավելվածի աղյուսակի 22-րդ կետով սահմանված հարմարեցման պահանջին, կարող են շահագործվել մինչև այդ վկայականի գործողության ժամկետի ավարտը՝ առանց վերաորակավորման հնարավորության:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի «Զբոսաշրջային ավտոբուսի որակավորման կարգը, ընթացակարգը, չափանիշները, վկայականի և նշանի ձևերը հաստատելու մասին» N 864-Ն որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ